

# Ա. ՏՐ ԼԱ ՄՕԹՐԷԻ ՈՒՂԵԳՐՈՒԹԵՆԷՆ ՀԱՅՈՑ ՄԱՍԻՆ



Թարգմանեց եւ ծանօթացրեց՝  
Յ. ՔԻՒՐՏԵԱՆ

Ա. Տր Լա Մօթրէի մեծածաւալ, եռահատոր ուղեգրութիւնը հրատարակուած է 1723-1732-ի ընթացքին Լոնտոնի մէջ: Հոն կան բազմաթիւ վկայութիւններ հայոց մասին, որոնք հոս ամբողջութեամբ թարգմանաբար կը ներկայացնեմ՝ անոնց կցելով հարկ եղած ծանօթութիւնները եւ լուսարանութիւնները:

Այս եղած է խղճամիտ ուղեգիր մը: Այցելած է Եւրոպայի, Ասիոյ եւ Ափրիկէի զանազան մասերը ու տուած մեզի տեղեկութիւններ եւ տպաւորութիւններ, որոնք արժանի են մեր մատենագրութեան մէջ մնայուն տեղ մը գրաւելու: Իբր չէզոք օտար մը, անկողմնակալ զիտող մը՝ ան կը պարզէ բաներ, որոնց վերաբերմամբ մեր ազգային աղբիւրները հարկ եղածին պէս յստակ չեն: Ըստ իս՝ արժէքաւոր աղբիւր մըն է, որ ցարդ չէ գործածուած եւ որ պէտք է լրջօրէն նկատի առնուի, երբ կը գրուի մեր ժէ. դարու վերջի եւ ժԸ. դարու սկզբի մեր պատմութիւնը:

1697-ական թիւերուն Վատիկան եւ

Հռոմ մայցելութեան առթիւ, երբ ան կը նկարագրէ Վատիկանի մատենադարանը, կը յիշէ, որ սրահները զարդարուած էին արժէքաւոր նկարներով անոնց, որոնք ժողովուրդի մը գրերուն գիւտին պատճառ եղած են: Ի միջի այլոց կը յիշէ նկարը «Սուրբ Ոսկերեքանի հայոց գրերուն» գտնողին 1): Ասիկա, անտարակոյս, սրխալ մըն է, քանի որ մեր գրերու գիւտը կատարած է Սահակ եւ Մեսրոպ:

Վենետիկի մէջ ան կը նկարագրէ յոյներու եկեղեցին եւ արարողութիւնները, որոնց ընթացքին կը յիշէ, թէ մկրտութեան ատեն «հայերը ջուրը չեն տաքցրներ, այլ մանկիկը կը մխրճեն եղանակի սառնագոյն ջուրին մէջ, որ կարելի է գտնել, եւ աւելի կը նախընտրեն գետ քան թէ տաշտիկ» 2): Հոս ալ հեղինակը զոհ եղած է անճշտութեան: Հայերը մկրտութեան ատեն մկրտութեան աւազանը կը դործածեն եւ ոչ թէ գետը: Գետին դործա-

1) Հատոր Ա. էջ 41:

2) Անդ՝ էջ 71, ծանօթութիւն: